ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Պրոֆ. Մ. Հ. ԱՊՈՆՅ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXV համագումարը քննարկեց ու հաստատեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները 1976—1980 թվականներին» ՍՄԿԿ Կենտկոմի նախագիծը, որը համագումարից առաջ համաժողովրդական քննարկման էր ենթարկվել և արժանացել մեր երկրի ողջ աշխատավորության միահամուռ հավանությանը։

Իրագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները, սովետական ժողովուրդը լենինյան կուսակցության ղեկավարությամբ իններորդ հնգամյակի տարիներին նոր խոշոր առաջընթաց քայլ կատարեց կոմունիստական հասարակարգի նյութատեխնիկական բազայի կառուցման ուղղությամբ։ Հնգամյակի ընթացքում նշանակալի զարգացում ստացան ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, բարձրացավ ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակը։ Կուսակցության XXIV համագումարի ընդունած սոցիալական զարգացման ծրագիրն ամբողջովին կենսագործվեց։

Արդյունաբերության արտադրանքի, կապիտալ ներդրումների, ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու նոր միջոցառումների իրականացման համար պետական հատկացումների բացարձակ չափերով իններորդ հնգամյակն իր հավասարը չուներ մեր երկրի պատմության ամբողջ ընթացքում։ Հնգամյակի տարիներին մեր երկրի ազգային եկամուտը աճեց 28 տոկոսով։

Իններորդ հնգամյակում խնդիր էր դրված ամբողջ ժողովրդի բարեկեցության բարձրացման հետ միասին հատուկ ուշադրություն դարձնել սակավ վարձատրվող աշխատողների եկամուտների ավելի արագ աճն ապահովելու վրա։ Բանվորների և ծառայողների ամսական միջին աշխատավարձը հնգամյակի ընթացքում աճեց 20 տոկոսով և 1975 թ. կազմեց 146 ռուբլի, իսկ հասարակական ֆոնդերից ստացվող եկամուտների ու զեղչերի հետ միասին՝ 198 ռուբլի։ Կոլտնտեսականների եկամուտները հնգամյակի ընթացքում աճեցին 25 տոկոսով։

Հնգամյակի տարիներին մանրածախ առևտրի ապրանքաշրջանառությունը, կայուն գների պայմաններում, աճեց 36 տոկոսով։ Ավելի արագ աճեց մսի, ձվի և այլ արժեքավոր սննդամթերքների, ինչպես նաև տնական օգտագործման ապրանքների՝ հեռուստացույցների, լվացքի ու կարի մեքենաների, սառնարանների, կահույքի և անձնական օգտագործման ավտոմոբիլների վաճառքը։ 1975 թ. բնակչությանը վաճառված է ավելի քան մեկ միլիոն ավտոմոբիլ, այսինքն՝ 1970 թ. համեմատությամբ 7 անգամ ավելի։

1971—1975 թթ. կառուցվեցին 11 միլիոն բնակարաններ՝ 544 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածությամբ։ Վերջին չորս հնգամյակների ընթացքում մեր երկրում կառուցվել է ավելի քան 2 միլիարդ քառակուսի մետր բնա-

կելի տարածություն։ Աշխարհում ոչ մի երկիր այդպիսի մեծ մասշտաբներով բնակարանային շինարարություն չի իրականացրել։ Բարելավվեցին նաև բնակչության աշխատանքային ու կենցաղային պայմանները, բժշկական սպասարկումը, ժողովրդական կրթության ու բնության պաշտպանության գործը։

Կուսակցության ձեռնարկած լայն միջոցառումների և գյուղի աշխատավորության անձնազոհ աշխատանքի շնորհիվ, գյուղատնտեսության արտադրանքը ևս զգալի չափով ավելացավ։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը իններորդ հնգամյակում, նախորդ հնգամյակի համեմատությամբ, աճեց 13 տոկոսով, հացահատիկի տարեկան միջին բերքը ավելացավ 14 միլիոն տոննայով։ Ավելացավ մսի, կաթի և անասնապահական մյուս մթերքների արտադրությունը։

1971—1975 թթ. ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց ավելի քան 500 միլիարդ ռուբլի։ Այդպիսի խոշոր կապիտալ ներդրումների շնորհիվ նշանակալի չափերով աճեց մեր երկրի տնտեսական պոտենցիալը։ Հնգամյակում արտադրական ֆոնդերն աճեցին մեկուկես անգամ, իսկ վերջին 10 տարում՝ ավելի քան երկու անգամ։

Իններորդ հնգամյակում կապիտալիզմի դեմ մղվող խաղաղ մրցակցական պայքարում Սովետական Միությունը մեծ հաջողությունների է հասել։ 1970—1975 թթ. մեր երկրի արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը կազմել է 7,4 տոկոս, մինչդեռ ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում «ընդհանուր շուկայի» երկրներում այդ աճը կազմել է 1,2 տոկոս։

Արդյունաբերական արտադրանքի ծավալը, ինչպես որ նախատեսված էր կուսակցության XXIV համագումարի դիրեկտիվներով, հնգամյակում մեծացավ 43 տոկոսով։ Ծանր արդյունաբերության զարգացման հնգամյա առաջադրանքները գերակատարվեցին։ Այժմ Սովետական Միությունը պողպատի, չուգունի, երկաթի, մարգանեցի և խրոմի հանքաքարի, նավթի, ածխի, կոքսի. ցեմենտի, կալիական աղերի, ֆոսֆորի, տրակտորների, ջերմաքարշերի, էլեկտրաքարշերի, բամբակի, վուշի արտադրությամբ աշխարհում առաջին տեղն է գրավում։ Այդ տվյալները նորից վկայում են իր դարն ապրած կապիտալիզմի նկատմամբ տնտեսության սոցիալիստական սիստեմի մեծագույն առավելությունների մասին։

Անցած հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսությունը ևս նշանակալի զարգացում ունեցավ։ Մեր հանրապետության ազգային եկամուտն աճեց 46 տոկոսով և 1975 թ. կազմեց 3,2 միլիարդ ռուբլի։ Ազգային եկամտի երեք քառորդն օգտագործվեց բնակչության նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման նպատակին։ 1975 թ., 1970 թ. համեմատությամբ, արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 46 տոկոսով, այդ աճի 68 տոկոսը ստացվել է աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Արդյունաբերության «Ա» խմբի արտադրանքն աճել է 43 տոկոսով, «Բ» խմբինը՝ 49,2 տոկոսով։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում միայն իններորդ հնգամյակում է, որ ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը զարգացել է առաջընթաց տեմպերով։

Սովետական Հայաստանի արդյունաբերության այնպիսի երիտասարդ ճյուղեր, ինչպիսիք են միկրոբիոլոգիական և բժշկական արդյունաբերությունը, փաստորեն ստեղծվել են իններորդ հնգամյակում. առաջինի համախառն ար-

տադրանքի ծավալը 1975 թ., 1970 թ. համեմատությամբ, աճել է 21,3 անգամ, իսկ երկրորդինը՝ 6,8 անգամ։ Չափազանց արագ թափով է զարգացել մեքենաշինությունը. արդյունաբերության այդ ճյուղի համախառն արտադրանքը հնգամյակում աճել է 78,4 տոկոսով։ Արագ տեմպերով է զարգացել նաև էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը. հնգամյակի ընթացքում նրա համախառն արտադրանքն ավելացել է 48,4 տոկոսով։ Այժմ մենք էլեկտրաէներգիայով ոչ միայն լրիվ բավարարում ենք հանրապետության կարիքները, այլև որոշ քանակի էլեկտրաէներգիա ենք տալիս Անդրկովկասյան միացյալ էլեկտրահամակարգին։

Մեծ հաջողություններ են ունեցել նաև մեր հանրապետության գյուղի աշխատավորները։ Իններորդ հնգամյակում գյուղատնտեսության միջին տարեկան համախառն արտադրանքը, նախորդ հնգամյակի համեմատությամբ, աճել է 21,9 տոկոսով։ 1975 թ. գերակատարվեցին հացահատիկի, բանջարեղենի, բոստանային կուլտուրաների, մսի, կաթի, ձվի, բրդի, շաքարի ճակնդեղի և կարտոֆիլի պետական գնումների պլանները։ Հնգամյակում գյուղատնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը կազմեց 736 միլիոն ռուբլի. կառուցվեցին անասնաբուծական մի քանի կոմպլեքսներ, ոռոգելի հողերի տարածությունը ընդլայնվեց 50 հազար հեկտարով, նշանակալի չափերով նորոգվեց ու աճեց գյուղատնտեսության մեքենայական պարկը։

Ժողովրդական տնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը հնգամյակում կազմեց 4,5 միլիարդ ռուբլի, որը նախորդ հնգամյակում կատարված կապիտալ ներդրումներից 32 տոկոսով ավելի է։ Հնգամյակում կառուցվեցին 45 արդյունաբերական ձեռնարկություններ և 50 խոշոր արտադրամասեր. ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի արժեքն աճեց 1,5 անգամ։

Նյութական արտադրության բոլոր ճյուղերի հաջող զարգացումը հնարավորություն տվեց բարձրացնելու բնակչության նյութական ու կուլտուրական մակարդակը։ Անցած հնգամյակում բնակչության մեկ շնչի ռեալ եկամուտներն աճել են 22,4 տոկոսով, սպառման հասարակական ֆոնդերից ստացվող եկամուտներն ավելացել են 37 տոկոսով, բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձը՝ 12,8 տոկոսով, կոլտնտեսականների եկամուտները հասարակական տնտեսությունից՝ 18,4 տոկոսով։ Մանրածախ առևտրի ապրանքաշրջանառությունը հնգամյակում աճել է 42,6 տոկոսով, բարելավվել է ապրանքաշրջանառության կառուցվածքը և հարստացել է վաճառվող ապրանքների տեսականին։

Բարձր աճ է ունեցել հանրապետությունում բնակարանային շինարարությունը. հնգամյակում կառուցվել ու շահագործման են հանձնվել 6,5 միլիոն քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ, 700 հազար բնակիչներ նոր բնակարաններ են ստացել և կամ բարելավել են իրենց բնակարանային պայմանները։ Կառուցվել են նաև մեծ թվով դպրոցներ, հիվանդանոցներ, գիտահետազոտական ինստիտուտների շենքեր։

Հայկական ՍՍՀ և միութենական մյուս հանրապետությունների մեծագույն նվաճումները, որ ձեռք են բերվել կուսակցության XXIV համագումարից հետո ընկած ժամանակամիջոցում, մի անգամ ևս ապացուցում են, որ միայն սոցիալիստական կարգերն ու ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականությունն

է, որ ապահովում են մեր լայնածավալ հայրենիքի բոլոր ազգությունների տնտեսության ու կուլտուրայի անկաշկանդ և արագ զարգացումը։

* * *

ՍՄԿԿ XXV համագումարի հաստատած տասներորդ հնգամյակը, որ Լ. Ի. Բրեժնևը անվանեց հոբելյանական հնգամյակ, տնտեսության ու կուլտուրայի զարգացման, բնակչության բարեկեցության բարձրացման ավելի հոյակապ հեռանկարներ է կանխատեսում սովետական բոլոր ժողովուրդների համար։

Տասներորդ հնգամյակի հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրները հստակորեն որոշված են կուսակցության XXV համագումարի որոշումներում։ «Տասներորդ հնգամյակի գլխավոր խնդիրն է՝ հետևողականորեն իրականացնել հանրային արտադրության դինամիկ ու համամասնական զարգացման և նրա արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի ըստ ամենայնի բարելավման հիման վրա ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու կոմունիստական կուսակցության կուրսը»։

Տասներորդ հնգամյակը նոր կարևոր փուլ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման, հասարակական հարաբերությունների կատարելագործման և նոր մարդու ձևավորման, սոցիալիստական ապրելակերպի զարգացման գործում։ Դա հասարակական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու, արտադրանքի որակը բարելավելու, երկրի տնտեսական հզորությունն ու պաշտպանունակությունն ամրապնդելու ժամանակաշրջան է։ Հնգամյակը նախատեսում է ոչ միայն արտադրության մասշտաբների նշանակալի մեծացում, այլև ժողովրդական տնտեսության և նրա առանձին ճյուղերի կառուցվածքի հետագա կատարելագործում։ Նախատեսվում է ապահովել գիտատեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղերի առավել արագ զարգացում, գյուղատնտեսական մթերքների և ժողովրդական սպառման արդյունաբերական ապրանքների ավելացում, բնակչության սպառման ոլորտի ընդլայնում։

Արտադրության ծավալի հսկայական աճը տասներորդ հնգամյակում պահանջում է չտեսնված մեծ քանակի նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցներ, որոնց չափերի աճման համապատասխան մեծանում է դրանք արդյունավետ ու խնայողաբար օգտագործելու նշանակությունը։

Հատկապես սուր է դրված առաջիկայում աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցը։ Սովետական Միության դեմոգրաֆիական վիճակն այժմ այնպիսին է, որ առաջիկա տասնամյակում աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի մեծ աճ չի սպասվում։ Այդպիսի պայմաններում արտադրության ընդլայնման գլխավոր գործոնը հանդիսանալու է աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ Տասներորդ հնգամյակում աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին պետք է ապահովվի ազգային եկամտի աճի 85—90 տոկոսը, արդյունաբերական արտադրանքի աճի մոտավորապես 90 տոկոսը, գյուղատնտեսության արտադրանքի, շինմոնտաժային աշխատանքների ամբողջ աճը և երկաթուղային փոխադրումների ծավալի աճի 95 տոկոսը։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդրի լուծումը 80-ական թթ. ավելի հրամայական է դառնալու։ «Դա կապված է,— ասում է Լ. Ի. Բրեժնևը,— նախ և առաջ աշխատանքային ռեսուրսների պրոբլեմի սրման հետ։ Մենք պետք է հարց գնենք ոչ թե լրացուցիչ աշխատուժի ներգրավման, այլ միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա։ Ձեռքի աշխատանքի բաժնի խիստ կրճատումը, արտադրության կոմպլեքսային մեքենայացումը դառնում են տնտեսական աճի անհրաժեշտ պայմանը»։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման նախատեսված մակարդակն ապահովելու համար յուրաքանչյուր ձեռնարկություն այնպես պետք է կազմակերպի արտադրությունն ու աշխատանքը, որպեսզի նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների յուրաքանչյուր միավորից ավելի շատ արտադրանք ստացվի։

Արտադրողական ուժերի արագ զարգացումը տասներորդ հնգամյակում, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարում, պահանջում է արտադրության համակողմանի ինտենսիվացում, գիտատեխնիկական առաջադիմության արագացում, աշխատանքի արտադրողականության բարձրացում. դրանք են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման գլխավոր գործոնները։

Որպեսզի ժողովրդական տնտեսությունը զարգանա ինտենսիվ կերպով, անհրաժեշտ է գիտատեխնիկական առաջադիմության նվաճումները օրգանապես միացնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ։ Այդ խնդրի լուծման գործում գիտությունը վճռական դեր ունի։

ՍՄԿԿ XXV համագումարի որոշման մեջ մեծ ուշադրություն է դարձվում ժողովրդական տնտեսության կառավարման, տնտեսական մեխանիզմի կատարելագործման հարցերի վրա։ «...Տնտեսության կառավարումը բարելավելու միջոցառումները,— ասում է Լ. Ի. Բրեժնևը,— մենք պետք է դիտենք որպես կարևորագույն ռեզերվ, որի օգտագործումը կօգնի հաջողությամբ կատարելու տասներորդ հնգամյա պլանը»։

Տնտեսության կառավարման կենտրոնական օղակը պլանավորումն է, այդ պատճառով էլ առաջին հերթին պետք է ապահովել նրա լուրջ կատարելագործումը։

Պլանավորումը մեր երկրում զարգացման մեծ ուղի է անցել, սակայն այն ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց պետք է անընդհատ կատարելագործվի։ Այժմ պլանային աշխատանքի մակարդակը պետք է բարձրացնել մեր տնտեսության նոր մասշտաբների ու բնույթի, ժամանակի նոր պահանջների համապատասխան։ Ժողովրդական տնտեսության մասշտաբների մեծացման հետ միասին չափազանց բարդացել է նրա կառուցվածքը. առաջացել են բազմաթիվ նոր ճյուղեր ու օղակներ, ներճյուղային ու միջճյուղային փոխադարձ կապեր։ Այդպիսի պայմաններում տարվելով միջանկյալ օղակներով, հեշտությամբ ձեռքից կարելի է բաց թողնել գլխավորը՝ վերջնական արդյունքները։ Պլանային մարմինները պետք է ձգտեն գլխավոր ուժերն ու միջոցները կենտրոնացնել կարևորագույն համապետական ծրագրերի կատարման վրա, ավելի հմուտ զուգորդեն ճյուղային և տերիտորիալ զարգաց-

ման, ընթացիկ և հեռանկարային պլանավորման հարցերը, հատուկ ուշադրություն դարձնեն էկոնոմիկայի հաշվեկշռայնության ապահովման վրա։

Պլանավորման կատարելագործման ուղղություններից մեկը պետք է հանդիսանա տնտեսական, գիտատեխնիկական ու սոցիալական կարևորագույն պրոբլեմների լուծման կոմպլեքսային ծրագրերի կազմումը։ Այդ ծրագրերը հնարավորություն կտան միասնական ժողովրդատնտեսական պլանի շրջանակներում գլխավոր ռեսուրսները կենտրոնացնել և օգտագործել հանգուցային պրոբլեմների և, միաժամանակ, միջճյուղային հարցերի լուծման նպատակին։

Ժողովրդական տնտեսության ղեկավարման բարելավման կարևոր օղակներից մեկն էլ կառավարման ձևերի և կառուցվածքի կատարելագործումն է։ Պետք է միաժամանակ ամրապնդել դեմոկրատական ցենտրալիզմի երկու կողմերն էլ. զարգացնել ցենտրալիզմը, պայքարելով գերատեսչական և տեղայնության միտումների դեմ և ամեն կերպ քաջալերել ներքին օղակների ստեղծագործական նախաձեռնությունը։

Ընթացիկ հնգամյակում հիմնականում պետք է ավարտվի արտադրական միավորումների կազմակերպումն արդյունաբերության մեջ, նրանց միջև հաստատելով ուղղակի ու տևական կապեր։ Միաժամանակ պետք է մշակվի ու կիրառվի շինարարության կառավարման նոր սխեմա։

Ժողովրդական տնտեսության ղեկավարման բարելավման ուղղություններից մեկն էլ տնտեսական մեխանիզմի կատարելագործումն է։ Անհրաժեշտ է բարձրացնել տնտեսական խթանների և լծակների՝ տնտհաշվարկի, շահույթի, գնի, ֆոնդավճարի, պարգևի դերը արտադրության արդյունավետության բարձրացման ու ձեռնարկությունների, միավորումների ու մինիստրությունների գործունեության գնահատման գործում։ Պետք է մշակել այնպիսի ցուցանիշներ ու նորմաներ, որոնք ճիշտ զուգակցեն աշխատողի շահերը ձեռնարկության շահերի հետ, ձեռնարկության շահերը՝ պետության շահերի հետ, խնայել ռեսուրսները, արագ յուրացնել նոր արտադրատեսակները, թողարկել բարձրորակ և հարկավոր տեսականու արտադրանք։ «Պետք է փակել բոլոր սողանցքները,—ասում է Լ. Ի. Բրեժնևը,—որոնք թույլ են տալիս անփույթ տնտեսվարներին համարվել առաջատար»։

Այժմ մենք պետք է գերազանցապես օգտագործենք հասարակական արտադրության զարգացման ինտենսիվ և որակական գործոնները, դա ընթացիկ հնգամյակի առանձնահատկություններից մեկն է։

XXV համագումարի որոշումներում նախատեսված է նյութական արտադրության այնպիսի աճ, որն ապահովի հնգամյակի սոցիալ-տնտեսական խնդիրների կատարումը։ Արդյունաբերության արտադրանքը պետք է աճի 35—39 տոկոսով, ըստ որում «Ա» խմբի արտադրանքը պետք է աճի 38—42 տոկոսով, «Բ» խմբինը՝ 30—32 տոկոսով։ Արդյունաբերության հիմնական խնդիրն է՝ առավել լրիվ բավարարել բարձրորակ արտադրանքի նկատմամբ ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջմունքները, ապահովել բոլոր ճյուղերի տեխնիկական վերազինումը և արտադրության ինտենսիվացումը։ Այդ խնդրի կատարման կարևոր պայմաններից մեկը արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճն է։

«Կուսակցության տնտեսական ստրատեգիայի առանցքը, որի վրա խարբսխվում են թե՛ տասներորդ հնգամյակը և թե՛ տևական հեռանկարը,—

ասում է Լ. Ի. Բրեժնևը,—երկրի տնտեսական հզորության հետագա մեծացումն է, արտադրական ֆոնդերի ընդլայնումն ու նորացումը, էկոնոմիկայի հիմքի՝ ծանր արդյունաբերության կայուն հաշվեկշռված աճի ապահովումը»։

Առանձնահատուկ պատասխանատվություն է ընկնում ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտները ժամանակակից մեքենաներով և սարքավորումներով ապահովելու կոչված ճյուղի՝ մեքենաշինության վրա։ Մեքենաշինության արտադրանքը հնգամյակում կաճի մոտավորապես 1,6 անգամ, ըստ որում առավել արագ կզարգանան ատոմային, մետաղագործական, քիմիական մեքենաշինությունը, ինչպես նաև էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնիկայի, հաստոցաշինության ու սարքաշինության որոշ ճյուղեր։

Արդյունաբերության «Ա» խմբի առավել արագ զարգացումը միաժամանակ ապահովելու է գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը և ինդուստրիալ հիմքի վրա փոխադրելը, ինչպես նաև ժողովրդական սպառման առարկաների արտադրության ընդլայնումը։

Կուսակցությունը խնդիր է դրել գյուղատնտեսությունը դարձնել արտադրության բարձր արդյունավետ և բարձր արտադրողական ճյուղ, ապահովել նրա կայուն ու անշեղ զարգացումը, թուլացնել նրա կախումը եղանակի պայմաններից և բնության քմահաճույքներից, բարձրացնել նրա աշխատանքի որակական ցուցանիշները և, վերջապես, աստիճանաբար վերացնել գյուղի ու քաղաքի կյանքի պայմանների միջև եղած էական տարբերությունները։

Գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումները հնգամյակում կկազմեն 171,7 միլիարդ ռուբլի, բացի դրանից, խոշոր ներդրումներ կկատարվեն նաև գյուղատնտեսությանն արտադրության միջոցներ մատակարարող և նրա հումքը վերամշակող արդյունաբերության ճյուղերում։ Ձեռք առնվող արմատական միջոցների շնորհիվ գյուղատնտեսության համախառն արտադրանքը տասներորդ հնգամյակում, նախորդ հնգամյակի համեմատությամբ, կաճի 14—17 տոկոսով, հացահատիկային կուլտուրաների տարեկան միջին բերքը 1976—1980 թթ. կկազմի 215—220 միլիոն տոննա։

Զարգացած սոցիալիստական հասարակարգն իր հզոր արտադրական, գիտատեխնիկական պոտենցիալով մեծ հնարավորություններ ունի բնակչության բարեկեցության բարձրացման ու սոցիալական զարգացման հարցերի լուծման համար։ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ ասաց, որ տասներորդ հնգամյակում և երկարաժամկետ հեռանկարում «...նոր հնարավորություններ են ստեղծվում կուսակցության ծրագրով վերջին համագումարների կողմից առաջադրված հիմնական սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար։ Դա վերաբերում է նախ և առաջ սովետական մարդկանց բարեկեցության հետագա բարձրացմանը, առողջապահության, կրթության, կուլտուրայի զգալի առաջադիմությանը՝ այն ամենին, ինչը նպաստում է նոր մարդու ձևավորմանը, անհատի համակողմանի զարգացմանը, սոցիալիստական ապրելակերպի կատարելագործմանը»։

Տասներորդ հնգամյակում բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները կաճեն 22—24 տոկոսով, իսկ առաջիկա 15 տարում՝ մոտ երկու անգամ։ Նախատեսվում է հինգ տարում բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը բարձրացնել 16—18 տոկոսով, 1980 թ. հասցնելով այն 170 ռուբլու, իսկ հանրային տնտեսությունից կոլտնտեսականների եկամուտները

սվելացնել 24—27 տոկոսով։ Սպառման հանրային ֆոնդերի հաշվին բնակչության տրվող վճարումներն ու արտոնությունները կաճեն 28—30 տոկոսով։ Պետական ու կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը կաճի 27—29 տոկոսով։

Բնակչության ռեալ եկամուտների աճն ապահովելու նպատակով կպահպանվի պետական առևտրի մանրածախ գների կայունությունը, իսկ առանձին տեսակների ապրանքների գները կիջեցվեն՝ անհրաժեշտ պայմանների ստեղծման և ապրանքային ռեսուրսների կուտակման համեմատ։

Մեծ մասշտաբով կծավալվի բնակարանային շինարարությունը, լայն ձեռնարկումներ կանցկացվեն ժողովրդական կրթության զարգացման, բժշկական սպասարկման բարելավման, սովետական հասարակարգի տարբեր սոցիալական խմբերի, գյուղի ու քաղաքի բնակիչների բարեկեցության ու կուլտուրական մակարդակի, նրանց աշխատանքի ու կենցաղային պայմանների մերձեցման ուղղությամբ։

Տասներորդ հնգամյակում հատուկ ուշադրություն է դարձվելու արտադրողական ուժերի տեղաբաշխման հարցերին։ Առաջիկայում մեծ հատկացումներ են կատարվելու մեր երկրի արևելյան շրջանների բնական հարստությունների օգտագործման ու տնտեսական պոտենցիալի հզորացման համար։ Նախատեսվում է ապահովել էկոնոմիկայի հետագա վերելքը բոլոր միութենական ու ինքնավար հանրապետություններում, տնտեսական շրջաններում, ինքնավար մարզերում և ազգային օկրուգներում։

Յուրաքանչյուր հանրապետության տնտեսությունն կազմում է Սովետական Միության միասնական ժողովրդական տնտեսության անբաժանելի օրգանական մասը։ Տասներորդ հնգամյակում էլ ավելի կուժեղանան միութենական հանրապետությունների տնտեսական կապերը, կմեծանա յուրաքանչյուր հանրապետության ու տնտեսական շրջանի ավանդը համապետական խնդիրների լուծման գործում։

Կուսակցության XXV համագումարի որոշումներում տրված են բոլոր հանրապետությունների, այդ թվում նաև Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղություններն ու ցուցանիշները տասներորդ հնգամյակում։ Հայաստանի ժողովրդական տնտեսության հեռանկարային զարգացման հարցերն իրենց արտացոլումն են գտել նաև Լ. Ի. Բրեժնևի նախաձեռնությամբ ընդունված՝ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» հայտնի որոշման մեջ։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVI համագումարը քննարկեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» ՍՄԿԿ Կենտկոմի նախագիծը։ Համագումարը միահամուռ հավանություն տվեց Կենտկոմի նախագծին և, ելնելով այդ նախագծից, կոնկրետ կերպով որոշեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները տասներորդ հնգամյակում։

ՍՄԿԿ XXV համագումարի որոշումները նախատեսում են տասներորդ հնգամյակում շարունակել Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության արագ զարգացումը, կատարելագործել նրա կառուցվածքը, բարձրացնել աշխատատար արտադրությունների բաժինը, զարգացնել մեքենաշինության առա-

ջաղիմական և նվազ մետաղատար ճյուղերը, լայն միջոցառումներ անցկացնել գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար, խոշոր ներդրումներ կատարել ժողովրդական տնտեսության մեջ, բարձրացնելով նրա տեխնիկական մակարդակը, բարձրացնել հասարակական արտադրության տնտեսական արդյունավետությունն ու բարելավել աշխատանքի որակը ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում։

Ընթացիկ հնգամյակում Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը կմեծանա 43—47 տոկոսով, նախորդ հնգամյակի 45 տոկոսի դիմաց։

Առաջատար տեմպերով կզարգանան էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիան։

1976 թ. շահագործման կհանձնվի հայկական ատոմային էլեկտրակայանի առաջին բլոկը, իսկ 1977 թ.՝ երկրորդը։ Ատոմային էլեկտրակայանի I հերթի, այսինքն՝ երկու բլոկների ընդհանուր հզորությունը կկազմի 830 հազար կիլովատ։ Տասներորդ հնգամյակում շահագործման կհանձնվեն Շամբի և Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները, էլեկտրական և ջերմային նոր հզորություններ շարք կմտնեն Հրազդանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայաններում։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը հնգամյակի ընթացքում կաճի 60 տոկոսով և 1980 թ. կկազմի 15 միլրդ կիլովատ-ժամ։ Մեծ աշխատանքներ են կատարվելու հանրապետության շրջանների գազիֆիկացման ուղղությամբ. 1980 թ. կավարտվի Եվլախ—Ստեփանակերտ—Գորիս—Ղափան—Սիսիան—Նախիջևան գազամուղի կառուցումը և բնական գազով կապահովվեն Գորիսի, Ղափանի և Սիսիանի շրջանները։ Հնգամյակում կկառուցվի նաև Ղազախ—Սևան մագիստրալային գազամուղի երկրորդ գիծը և բնական գազ կանցկացվի Ղուկասյանի, Ապարանի, Եղեգնաձորի ու Ազիզբեկովի շրջաններում։

Զգալիորեն արագ տեմպերով կզարգանա մեքենաշինությունը, նրա արտադրանքը հնգամյակում կաճի 80 տոկոսով։ Կշարունակվի մեքենաշինության ճյուղային կառուցվածքի բարելավումը, նրա արտադրանքի ընդհանուր ծավալում կբարձրանա էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, հաստոցաշինական արդյունաբերության և սարքաշինության տեսակարար կշիռը։ Միայն մեքենաշինության գծով կատարվող կապիտալ ներդրումները կկազմեն 477 միլիոն ռուբլի, այսինքն՝ նախորդ հնգամյակի համեմատությամբ 70 տոկոսով ավելի։ Տասներորդ հնգամյակում տեխնիկապես կվերազինվեն ու կվերակառուցվեն 30 գործող և 23 նոր խոշոր մեքենաշինական ձեռնարկություններ։

Հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացումը հիմնականում տեղի կունենա գործող ձեռնարկությունների վերակառուցման և ընդարձակման հաշվին։ Այս ճյուղի համախառն արտադրանքը հնգամյակում կավելանա 39 տոկոսով։ Ավելի արագ տեմպերով կզարգանա կենցաղային և մանրատոննաժային քիմիան։

Տասներորդ հնգամյակում մեծ միջոցառումներ կիրագործվեն Երևանի և հանրապետության մի շարք քաղաքների օդային ավազանը թունավոր գազերից և արտադրական փոշուց մաքրելու ուղղությամբ։ Այդ նպատակով քիմիական ձեռնարկություններում կկատարելագործվեն տեխնոլոգիական պրոցեսները, կտեղադրվեն նոր, կատարելագործված սարքավորումներ։ Միաժա-

մանակ Երևանում և Կիրովականում կփակվեն մի շարք վնասակար արտադրամասեր։

Հայաստանի արդյունաբերության մասնագիտացման դեմքը որոշող ճյուղերից մեկը գունավոր մետալուրգիան է։ Արդյունաբերության այդ ճյուղում կատարվող կապիտալ ներդրումները նոր հնգամյակում կկազմեն 270 միլիոն ռուբլի։ Նախատեսվում է ավարտել Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդարձակումը, Քանաքեռի ալյումինի գործարանի ֆոլգագլանվածքի արտադրության ընդլայնումը, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի վերակառուցումը, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը։ Շահագործման կհանձնվեն Զոդի ոսկու հանքերի կոմբինատը՝ Արարատի հարստացուցիչ գործարանով, ինչպես նաև Շահումյանի կիսամետաղների հանքավայրը։ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդարձակման կապակցությամբ կալարտվի Դեղի գետի վրա 52 միլիոն խորանարդ մետր տարողությամբ ջրամբարի կառուցումը։ Միաժամանակ այստեղ մեծ աշխատանքներ կտարվեն հանքաքարի կոմպլեքսային օգտագործման ու շրջապատող միջավայրի պահպանության համար։ Անհրաժեշտ կապիտալ ներդրումներ կարվեն Քաջարանի կոմբինատի մաքրման կայանների կառուցման, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի՝ ծծումբ պարունակող գազերի լրիվ վերամշակման ու վնասազերծման, ինչպես նաև կոմբինատի սանիտարական գոտու ստեղծման համար։ Հնգամյակում գունավոր մետալուրգիայի արտադրանքը կաճի 38 տոկոսով։

Զափազանց արագ թափով կզարգանան հանրապետության արդյունաբերության այնպիսի երիտասարդ և հեռանկարային ճյուղեր, ինչպիսիք են միկրոբիոլոգիական և բժշկական արդյունաբերությունը, առաջինի համախառն արտադրանքը հնգամյակում կաճի 6,7 անգամ, իսկ երկրորդինը՝ մոտ 2 անգամ։

Հնգամյա պլանով լուրջ միջոցառումներ են նախատեսվում շինանյութերի արդյունաբերության զարգացման համար։ Տուֆի, ֆելզիտի, բազալտի, մարմարի սալիկների արտադրությունը հնգամյակում կավելանա 2,5 անգամ, որը հնարավորություն կտա ոչ միայն լրիվ բավարարելու երեսպատման սալիկների պահանջը հանրապետությունում, այլև մեծ քանակով սալիկ արտահանելու երկրի մյուս շրջանները և նույնիսկ արտասահմանյան երկրներ։ Պերլիտի հումքի բազայի վրա մի շարք նոր արտադրություններ կկազմավորվեն Մասիսում, Էջմիածնում, Նուռնուսում, ինչպես նաև Երևանի կերամիկական իրերի գործարանում։ Շահագործման կհանձնվի Հոկտեմբերյանի ապակե տարայի գործարանը, կընդարձակվեն Արզնու «Հայբյուրեղ-ապակի» գործարանը և Լենինականի ապակու գործարանը։ Շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքը հնգամյակում կաճի 38,3 տոկոսով։

Նախատեսվում է ժողովրդական սպառման առարկաների արտադրության նշանակալի աճ։ Թեթև արդյունաբերության արտադրանքը կավելանա 33,6 տոկոսով, նկատելի չափով կմեծացվեն թեթև արդյունաբերության արտադրական հզորությունները։ Նախատեսվում է տեխնիկապես վերազինել, վերակառուցել ու ընդարձակել բազմաթիվ ձեռնարկություններ։ Միաժամանակ կկառուցվեն մի շարք նոր խոշոր ձեռնարկություններ. կարի նոր ֆաբրի-

կա կկառուցվի Ջարենցավանում, տեքստիլ-գալանտերեայի ֆաբրիկա՝ Արտաշատում, գորգի կոմբինատ՝ Մարտունիում։

Գյուղատնտեսական հումքի արտադրության ավելացման ու բարձրորակ սննդամթերքների նկատմամբ բնակչության հարաճուն պահանջմունքին համապատասխան կընդարձակվի հանրապետության սննդարդյունաբերությունը։ Նկատելի չափերով կաճի գինու, կոնյակի, գարեջրի, հրուշակեղենի ու պահածոների արտադրությունը։ Հանրապետության բարձրորակ հանքային ջրերի հսկայական պաշարների գեթ մի փոքր մասի օգտագործման նպատակով կվերակառուցվեն ու կընդարձակվեն «Ջերմուկ», «Բջնի» և «Արզնի» հանքային ջրերի գործարանները։ Դրանց արտադրանքը հնգամյակում կաճի 2,5 անգամ, որը հնարավորություն կտա բարելավելու հանրապետության բնակչության պահանջները և միաժամանակ ավելացնելու հանքային ջրերի արտահանումը երկրի տարբեր շրջանները։ Հնգամյակում կկառուցվեն սննդարդյունաբերության մի շարք նոր ձեռնարկություններ, որոնց թվում պարֆյումերիայի խոշոր ֆաբրիկա՝ Նաթունարխում։

Մսեղենի և կաթնեղենի արտադրության ընդարձակման նպատակով ևս կկառուցվեն մի շարք նոր ձեռնարկություններ, որոնց թվում մսի խոշոր կոմբինատ Կամո քաղաքում, կաթի կոմբինատ՝ Ախուրյանում, մսի կիսաֆաբրիկատների գործարան՝ Երևանում, պանրի 4 գործարաններ՝ հանրապետության տարբեր շրջաններում։

Լուրջ ուշադրություն է դարձվելու նաև տեղական արդյունաբերության զարգացման վրա։

Տասներորդ հնգամյակը հանդիսանալու է որակի և արդյունավետության բարձրացման հնգամյակ։ Հանրապետության արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ արդեն մասնակցում են արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման, 1976 թ. ժողովրդատնտեսական պլանի հաջող կատարման համամիութենական սոցիալիստական մրցության։

Զափազանց լուրջ խնդիրներ են դրված հանրապետության գյուղատնտեսության առջև։ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումը համակողմանի միջոցառումներ մշակեց գյուղատնտեսության զարգացման համար, որից հետո գյուղատնտեսական արտադրությունը նշանակալի չափերով ընդլայնվեց։ Սակայն գյուղատնտեսության մեջ դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ՝ ցածր է գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, անասնաբուծության մթերատվությունը և կապիտալ ներդրումների արդյունավետությունը։

Կուսակցության XXV համագումարը նոր միջոցառումներ է նախատեսում գյուղատնտեսության կայուն զարգացումն ապահովելու համար։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության միջին տարեկան համախառն արտադրանքը տասներորդ հնգամյակում, նախորդ հնգամյակի համեմատությամբ, կաճի 22—25 տոկոսով։ Այդ աճն ամբողջովին պետք է ապահովվի գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, անասնաբուծության մթերատվության, աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Հնգամյակում հացահատիկային կուլտուրաների տարեկան միջին բերքը կկազմի 304 հազար տոննա, բանջարեղենինը՝ 401 հազար տոննա, կարտոֆիլինը՝ 278 հազար տոննա, խաղողինը՝ 254 հազար տոննա, պտուղների-

նը՝ 166 հազար տոննա, մսի արտադրությունը՝ 78 հազար տոննա, կաթինը՝ 424 հազար տոննա։ Բանջարեղենի և բոստանային կուլտուրաների գծով բնակչության պահանջներն ամբողջովին կբավարարվեն տեղական արտադրության հաշվին։

Կշարունակվի գյուղատնտեսության մասնագիտացման խորացումը՝ խաղողագործության, պտղաբուծության և բանջարեղենի արտադրության առավել արագ զարգացման միջոցով։ 1980 թ., 1975 թ. համեմատությամբ, խաղողի արտադրությունը կաճի 33,8 տոկոսով, պտուղներինը՝ 24,5 տոկոսով, բանջարեղենինը՝ 41,7 տոկոսով, բոստանային կուլտուրաներինը՝ 49,5 տոկոսով։ Մեծ աշխատանքներ կտարվեն խաղողի այգիների նոսրության վերացման, խաղողի սորտերի բարելավման ուղղությամբ։ Խաղողի այգիների ընդհանուր տարածության մեջ գնալով իջնում է այնպիսի արժեքավոր տեսակների տեսակարար կշիռը, ինչպիսիք են Ոսկեհատը, Մուսկասը և այլն, որը բացասական ազդեցություն է ունենում Հայաստանի գինիների և կոնյակի որակի վրա։ Այժմ լուրջ միջոցառումներ են մշակվում արժեքավոր տեսակների խաղողի տնկարքների ընդարձակման, նրանց բերքատվության բարձրացման համար։ Հնգամյակում պետք է տնկվեն 4400 հեկտար խաղողի նոր այգիներ և 4550 պտղատու այգիներ։

Անասնաբուծության զարգացման համար կերային կուլտուրաների տարածությունը հնգամյակում աճելու է 11,7 տոկոսով, իսկ բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունը՝ 40,6 տոկոսով։ Կառուցվելու և ընդարձակվելու են մի քանի թռչնաֆաբրիկաներ, անասնաբուծական կոմպլեքսներ, կազմակերպվելու են կաթի ու բանջարեղենի մերձքաղաքային խոշոր բազաներ։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի հետագա ընդլայնման ու ամրապնդման նպատակով կծավալվեն շինարարական մեծ աշխատանքներ։ Գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումները հնգամյակում կկազմեն 1,24 միլիարդ ռուբլի, որից պետական միջոցների հաշվին՝ 1 միլիարդ ռուբլի։ Կավարտվի Ախուրյանի, Աղատանիի, Ջողազի, ջրամբարների կառուցումը, միաժամանակ կսկսվեն Բջնիի, Գետիկի ջրամբարների և Մալինի ոռոգման սիստեմի երկրորդ հերթի կառուցման աշխատանքները։ Ոռոգելի հողերի տարածությունները հնգամյակում կընդարձակվեն 20 հազար հեկտարով, և 60 հազար հեկտար արոտատեղեր կջրարբիացվեն։

Կշարունակվի տրանսպորտի բոլոր տեսակների արագ զարգացումը Հայաստանում։ Ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը կաճի 42 տոկոսով։ 1976 թ. կավարտվի Սևան—Շորժա—Ջոդ երկաթգծի կառուցումը, և հնգամյակում կարագացվի Իջևան—Դիլիջան—Համզաչիման—Հրազդան երկաթգծի կառուցումը։ Ավելի արագ տեմպերով կզարգանա օդային տրանսպորտը, կավարտվի Լենինականի, Գորիսի, Բերդի և Ստեփանավանի նոր օդանավակայանների կառուցումը, կընդարձակվի Երևանի «Արևմտյան» օդանավակայանը։

Որոշ չափով կբարելավվի արտադրողական ուժերի տեղաբաշխումը Հայաստանում։ Ավելի արագ թափով կզարգանան փոքր քաղաքները. կառուցվող 42 նոր արդյունաբերական ձեռնարկություններից 29-ը կտեղադրվեն փոքր քաղաքներում և գյուղական վայրերում։

Զգալի չափով կավելանա ժողովրդական տնտեսության մեջ զբաղված աշխատողների թվաքանակը։ Միայն արդյունաբերության մեջ աշխատող բանվորների և ծառայողների թիվը հնգամյակում կաճի 50 հազար մարդով։

Նյութական արտադրության զարգացումը կծառայի բնակչության կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

Հնգամյակում բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները կավելանան 23 տոկոսով, բնակչության դրամական եկամուտները կաճեն 36 տոկոսով։ Առաջիկա տարիներին լիովին կավարտվի նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև աշխատողների միջակ վարձատրվող կատեգորիաների դրույքների և ռոճիկների բարձրացումը անարտադրողական ոլորտի ճյուղերում, որից հետո կսկսվի բանվորների ու ծառայողների նվազագույն աշխատավարձի, դրույքների և ռոճիկների բարձրացման նոր փուլ։

Հնգամյակը նախատեսում է ապրանքաշրջանառության ծավալի աճ 35 տոկոսով։ 1980 թ. բնակչության մեկ շնչին ընկնող ապրանքաշրջանառությունը կազմելու է 790 ռուբլի։ Կբարելավվի մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքը, կհարստացվի վաճառվող ապրանքների տեսականին։

Նոր հնգամյակում կշարունակվի մասսայական բնակարանային շինարարությունը։ 1976—1980 թթ. հանրապետության միայն քաղաքային վայրերում շահագործման կհանձնվեն 4,3 միլիոն քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տներ։ 1980 թ. քաղաքային մեկ բնակչին միջին հաշվով կընկնի 10,9 քառակուսի մետր բնակելի տարածություն, իսկ գյուղական մեկ բնակչին՝ 12 քառակուսի մետր։

Հետագա նշանակալի զարգացում կստանան նաև գիտությունը, կուլտուրան, ժողովրդական կրթությունը, առողջապահությունը և բնակչության կենցաղային սպասարկումը։